Ալեքսանդր Շիրվանզադե

Հսկան և թզուկը

(Դիալոգ)

Հսկա. Էյ, թզուկ, խոնարհվիր իմ առջև, ապա թե ոչ՝ տեսնո՞ւմ ես այս մտրակը:

Թզուկ. Խոնարհվում եմ, մեծդ հսկա, արդեն վաղուց եմ խոնարհվել. բայց ինչո՞ւ համար ես դու այդ կրկնում ամեն օր, ամեն ժամ:

Հսկա. Կրկնում եմ, որ չմոռանաս: Քեզ նման ոչնչությունները երախտամոռ են լինում շատ անգամ: Իսկ ես ախորժակս կորցնում եմ, երբ երախտիքս մոռանում են:

Թզուկ. Ունես իրավունք, բայց մի՞թե ես մոռացել եմ երբևէ քո երախտիքը:

Հսկա. Չես մոռացել, բայց կարող է պատահել, որ մոռանաս: Այ, ինչպես մոռացավ քո ընկերներից մեկը, որին ազատել եմ ավազակների ձեռքից: Այդ գարշելին մի մեծ տան մեջ թաքնված լուսամուտից քարեր է արձակում ինձ վրա:

Թզուկ. Արդարև իմ ընկերոջ վարմունքը գարշելի է, բայց արդյոք չե՞ս նեղանա, եթե թույլ տամ ինձ խոնարհաբար մի հարց առաջարկել քեզ:

Հսկա. Առաջարկիր:

Թզուկ. Արդյոք ի՞նչ երախտիք ունես ինձ վրա, որ վախենում ես մոռանամ: Հսկա. (Մտածելով): Ի՞նչ, երախտի՞ք: Սպասիր, թող որ մտաբերեմ: Հա, հիշեցի, ես քեզ թույլ եմ տալիս աշխարհի երեսին ապրելու:

Թզուկ. Շնորհակալ եմ, մեծդ բարերար, բայց, ներիր, չէ՞ որ ապրելու իրավունք ես աստծուց եմ ստացել, այլ ոչ քեզանից: Եվ այն էլ ե՛րբ եմ ստացել. քո աշխարհ գալուց շատ և շատ առաջ. որովհետև թեև ես մարմնով փոքր եմ, բայց տարիքով քեզնից երկու անգամ մեծ:

Հսկա. Ես տարիների հաշիվը չեմ պահում և ոչ մի խրոնոլոգիա կամ պատմություն չեմ ընդունում: Ես գիտեմ միայն, որ եթե ուզենամ, մի հարվածով կարող եմ քեզ ոչնչացնել: Չեմ ոչնչացնում, ուրեմն քո բարերարն եմ: Ահա իմ երախտիքը:

Թզուկ. Է՛հ, թող քո ասածը լինի. ես աշխարհի երեսին գոյություն ունեմ քո բարության և վեհանձնության շնորհիվ: Բայց ինչո՞ւ չես ընդարձակում քո բարությունն ու վեհանձնությունն այնչափ, որ ես կարողանամ մի քիչ ավելի մարդավարի ապրել: Ինչո՞ւ օր ու գիշեր այդ հսկայական բռունցքդ բանեցնում ես իմ փոքրիկ գլխի վրա: Չէ՞ որ ես էլ մի քիչ պատվասիրություն ունեմ:

Հսկա. Ի՞նչ, պատվասիրությո՞ւն: Ի՛նչպես ես համարձակվում խոսել պատվասիրության մասին, անիծյալ: (Մտրակով զարկում է թզուկի գլխին): Դու չունե՛ս իրավունք:

Թզուկ. (Ճակատից հոսող արյունը սրբելով): Հարվածդ այս անգամ շատ աջող էր, բայց կարելի՞ է իմանալ, թե ինչու ես չունիմ իրավունք պատվասիրության մասին ակնարկելու:

Հսկա. Որովհետև աստված պատվի զգացումը միայն ինձ նման մեծերին է պարգևել, իսկ քեզ նման թզուկները չեն կարող գաղափար ունենալ նրա մասին:

Թզուկ. Թույլ եմ տալիս ինձ, պատվելի հսկա, ասելու, որ աստծու հետ ես քեզնից մի քիչ ավելի եմ ծանոթ, քանի որ քեզնից ավելի շատ տարիներ եմ աղոթել նրան: Կարող եմ ասել, որ նրա մասին ես եմ շատերին գաղափար տվել: Ուստի որքան ինձ հայտնի է աստվածաշնչից և ավետարանից, աստված մեծերին էլ, փոքրերին էլ օժտել է մարդկային միևնույն զգացումներով: Գուցե մեկին ավելի, մյուսին պակաս, բայց ամենքին օժտել է: Ես թույլ եմ տալիս կարծելու, որ իմ և քո միջև եղած տարբերությունը միայն մեր ֆիզիկական չափերի մեջ է: Դու խոշոր

ես ծնվել, ես մանր, բայց դու էլ երկու աչք ունես ու մի բերան, ես էլ, դու էլ մի գլուխ ունես, ես էլ: Դեռ հարց է, թե քո՞ գլուխն է ավելի լավ մտածում, թե՞ իմը, կամ քո՞ աչքերն են ավելի լավ տեսնում, թե՞ իմը:

Հսկա. Գիտե՞ս, ես ատելով ատում եմ, երբ թզուկները սկսում են դատողություններ անել: Ես առհասարակ դատողություններ չեմ սիրում և զզվում եմ փիլիսոփայությունից: Դա իմ մարսողությանը վնաս է:

Թզուկ. Ներիր, մեծդ խոշորություն, ես փիլիսոփայություն չեմ անում, քավ լիցի: Ես միայն կամենում եմ ամենախոնարհաբար իմ մարդկային իրավունքներն ապացուցանել, որպեսզի հաստատեմ, որ ես էլ բացի մարմնավոր ցավից՝ զգում եմ հոգեկան ցավ:

Հսկա. (Բռունցքով զարկելով թզուկի գլխին): Դե, եթե կարող ես, ապացուցիր:

Թզուկ. (Հարվածից թեքվելով դեպի գետին): Շնորհակալ եմ երկրորդ հարվածիդ համար, բայց հուսով եմ, որ երրորդից կազատես ինձ:

Հսկա. (Մի անգամ ևս զարկելով): Ահա քեզ և երրորդը, չորրորդը, հինգերորդը:

Թզուկ. (Ընկնելով գետնի վրա՝ ճչում է): Այ, վա՛յ:

Հսկա. Դու համարձակվում ես գոռա՞լ, գարշելի,որ դրացիներս լսեն: Էյ, ծառաներ, կապեցեք այդ ապստամբի, այդ ըմբոստի, այդ հեղափոխականի բերանը, տարեք ներքնատուն և 250 ճիպոտի հարվածներ տվեք: Հետո երեք օր և երեք գիշեր սոված պահեք: